Անշուշտ լսել եք, որ Ճապոնում, ձիերի սակաւութան պատճառով, ամբողջ մի դասակարգ կայ, որ նրանց պաշտօնն է կատարում:

Կառքերը խիստ փոքր են, միայն մի մարդու նստելու համար. ջենրիկշան բռնում է նրա երկայն թեւերից եւ արագ վազ է տալիս, ոտները թափահարելով իսկական ձիու պէս:

Բոլորովին հարթ ու յարմար խճուղին ձգւում է ժապաւէնի պէս, որի վրայով երկանիւ թեթեւ կառքը գլորւում է շատ հեշտ ու առանց առանձին ջանքի:

Այդ պատճառով ջինրիկիշայի աշխատանքը նրա ուժերից վեր չէ, անասնական մի բան չի համարւում. չի ճնշում, չի նւաստացնում նրա մարդկային արժանաւորութիւնը: Նա միշտ ուրախ ու բաւական է եւ մի առանձին հոգածութեամբ է վարւում իր հեծնորդի հետ:

Նրա առածն էլ մեծ բան չէ. մէկ մեքսիկեան դօլլարով (ռուբլի) կարելի է նրան ամբողջ օրով վարձել: Եւ նա բացարձակ յօժարութեամբ կատարում է ձեր բոլոր պատւէրները, քաշում է, կանգնում կամ անփոյթ նստած իր կառքի առջեւի մասում՝ սպասում է ձեզ, մինչեւ որ դուք ձեր գործը վերջացնէք:

Եւրոպացին իր երկրի հասկացողութեամբ չի կարող մի ռուբլին բաւական համարել այդ աշխատանքի համար, եւ տալիս է ընդհանրապէս աւելի: Դրա համար էլ օտար եկւորների տեսքը մագնիսի ազդեցութիւն է անում, իսկոյն թափւում են գլխիդ եւ յամառ հետեւում են քեզ, մինչեւ որ ձանձրանաս ու զիջես նրանց խնդրանքին:

Բայց այս անգամ նրանց յամառութիւնը յաջողութիւն չունեցաւ: